ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

---

«15» մարտի 2019թ. № 2/1118-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## Հ.ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԵՎ Ռ.ԽԵԲՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 18/2019 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջները խախտելու, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները ոչ պատշաճ կատարելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի Հյուսիսային մաքսատուն-վարչության Բավրայի մաքսային կետ-բաժնի 1-ին բաժանմունքի մաքսային տեսուչ Հայկ Լյովայի Հովսեփյանին և նույն մաքսային կետ-բաժնի 3-րդ բաժանմունքի մաքսային տեսուչ Ռոբերտ Մեսրոպի Խեբյանին հայտարարել նկատողություն:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին – սույն հրամանը իրազեկել ողջ անձնակազմին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 3/18/2019 15:46:58 GMT+4

Signed by: ANANYAN DAVIT 2010710142

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Դ.ԱՆԱՆՅԱՆ